Ս. ԵԳԱՆՅԱՆ
(Ձեռագրատան գլխավոր ավանդապահ)

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ՀԱՅԵՐԵՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՀԱՎԱՔԱԾՈՒՆ

Անցյալի կրոնական, կրթական և ազգային հաստատություններից շատերի նման Էջմիածնի Գևորգյան ճեմարանը ևս ունեցել է հայերեն ձեռագրերի իր սեփական հավաքածուն, որը սկզբնավորվել է 1874 թվականին՝ ճեմարանի հիմնադրման հետ միաժամանակ, և, ըստ պահպանված ցուցակի, **«Ցուցակ հայերէն ձեռագրաց Գէորգեան հոգեւոր ճեմարանի»**[1], 1907 թվականին արդեն ամփոփում էր ԺԴ—ԺԹ դարերում ընդօրինակված 56 գրչագիր մատյաններ:

Գևորգյան ճեմարանի հայերեն ձեռագրերի հավաքածուն (որը որպես այդպիսին բանասիրությանը քիչ է հայտնի), ինչպես ցույց են տալիս ձեռագրերի վրա պահպանված ընծայական մակագրությունները, կազմվել է 1874—1907 թվականների ընթացքում՝ ճեմարանի սաների, դասախոսների և բարեկամների նվիրաբերություններով, որոնցից շատերը ստացվել են 1899 թվականին, ճեմարանի 25-ամյա հոբելյանի առթիվ:

Հավաքածուն իր գոյությունը պահպանել է մինչև 1907 թվականի մայիսի 18-ը, որից հետո Մեսրոպ վարդապետ Տեր-Մովսիսյանի ջանքերով տեղափոխվել է Էջմիածնի Մատենադարան և մուծվել Մատենադարանի «Գևորգյան» կոչվող հավաքածուի մեջ: Այդ մասին Մեսրոպ Տեր-Մովսիսյանը հետևյալն է արձանագրել «Գևորգյան» հավաքածուի գույքամատյանում. «1907 թ. մայիսի 18-ին Գևորգյան ճեմարանից Մայր Աթոռի Մատենադարան բերեցի հետևյալ ձեռագրերը... Տեսուչ Մատենադարանի Մեսրոպ վ[ա]ր-[դապետ]»[2]:

Թեև Մեսրոպ Տեր-Մովսիսյանը որոշակի կերպով չի նշում, թե քանի՞ ձեռագիր է տեղափոխվել, բայց Գևորգյան ճեմարանի ձեռագրերի ցուցակի և «Գևորգյան» հավաքածուի գույքամատյանի տվյալների համեմատությունից պարզվում է, որ 1907 թվականի մայիսի 18-ին Էջմիածնի Մատենադարան է տեղափոխվել ճեմարանի 56 ձեռագրերից միայն 52-ը (№№ 2—22, 24—28, 30—54, 56), որոնք «Գևորգյան» հավաքածուի գույքամատյանում արձանագրված են 1172—1222 և 1224 թվահամարների ներքո[3]:

Մնացած 4 ձեռագրերը (№№ 1, 23, 29, 55), որոնց նկարագրությունը բերում ենք ստորև, «Գևորգյան» հավաքածուի գույքամատյանում չեն արտահայտված:

Այդ ձեռագրերն են.

№ 1. «Աւետարան. հրդեհից ազատուած, կիսովին այրուած, վերջից պակաս»:

№ 23. «Գանձարան. կազմեալ, բաւական քայքայուած, մանաւանդ վերջը. ունի յիշատակարան: Թիւ՝ 1659, գրիչ՝ Մկրտիչ, տեղ՝ Կաֆայ»:

№ 29. «Հմայիլ, անկազմ, սկզբից և վերջից թերի, գրիչ՝ թերևս Կարապետ. յիշատակարան և այլն չկայ»:

№ 55. «Թերթ-թերթ ոտանաւորներ՝ գրեալ

[1] Մատենադարան, Անտիպ ձեռագրացուցակների ֆոնդ, № 12:

[2] Անդ, № 4ա, թերթ 44բ:

[3] Անդ, թերթ 44բ—47ա:

այլ և այլ ժամանակ և այլ և այլ գրիչներից. բոլորովին նոր ձեռագիր»:

Որ այդ 4 ձեռագրերից (№№ 1, 23, 29, 55) առնվազն 3-ը հետագայում մուտք են գործել Մատենադարան, անտարակուսելի է: Այդ է վկայում ճեմարանի տեսուչ Բագրատ վարդապետի 1910 թվականի նոյեմբերի 8-ի № 637 գրությունը՝ հասցեագրված Մեսրոպ Տեր-Մովսիսյանին, ուր ասված է. «Վարչությունս ներկայացնում է Ձերդ գերապատվության ճեմարանի Մատենադարանում գտնված երեք ձեռագրերը և խնդրում զետեղել Մայր Աթոռի Մատենադարանում»[4]:

«Գևորգյան» հավաքածուն եզրափակված լինելով մինչև 1910 թվականի մայիսը մուտք գործած ձեռագրերով[5] և այնուհետև միաձուլված ընդհանուր ֆոնդին, բնականաբար վերոհիշյալ ձեռագրերը այլևս «Գևորգյան» հավաքածուի մեջ մուտք գործել չէին կարող և պիտի ստանային ընդհանուր ֆոնդի հերթական թվահամարներ:

Մատենադարանի ֆոնդերում, «Գևորգյան» հավաքածուից դուրս, այդ 4 ձեռագրերը հայտնաբերելու ուղղությամբ կատարված ստուգումների շնորհիվ հնարավոր եղավ ճշտել միայն № 23 «Գանձարան»-ի և № 29 «Հմայիլ»-ի արդի թվահամարները, որոնցից առաջինը գրանցված է № 4183-ի, իսկ երկրորդը՝ № 4325-ի տակ: Ինչ վերաբերում է № 1 «Աւետարան»-ին ու № 55 «Ոտանաւորներ»-ին, ապա դրանց չափազանց սուղ և միաժամանակ խիստ անորոշ տվյալները թույլ չեն տալիս որոշակիորեն կանգ առնել այս կամ այն ձեռագրի վրա, մանավանդ որ կան համանման տվյալներ ունեցող մի շարք ձեռագրեր:

Այսպիսով, Գևորգյան ճեմարանի հավաքածուի 56 ձեռագրերից որոշակիորեն Մաշտոցյան Մատենադարանումն են գտնվում միայն 54-ը (№№ 2—54, 56), իսկ մնացած 2-ի (№№ 1, 55) ուր, կամ ավելի ճիշտ՝ ինչ թվահամարների տակ, գտնվելը առայժմ մնում է անորոշ:

Առկա 54 ձեռագրերից 1-ը ԺԴ դարից է, 2-ը՝ ԺԵ, 3-ը՝ ԺԶ, 25-ը՝ ԺԷ, 8-ը՝ ԺԸ, իսկ մնացած 15-ը՝ ԺԹ: Ամենահնագույնը Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց»-ի ինքնագիր օրինակն է, գրված 1387 թվականին, իսկ ամենանորագույնը՝ Իսահակ Ալեքսանդրյանի 1865 թվականին գրած «Նարեկի մեկնություն»-ը:

Ձեռագրերի բովանդակության և հարակից հարցերի մասին տեղեկություններ կարելի է քաղել Մաշտոցյան Մատենադարանի ձեռագրացուցակի Ա հատորից՝ օգտվելով հին և նոր թվահամարների ստորև բերվող համեմատական տախտակից:

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՏԱԽՏԱԿ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ՁԵՌԱԳՐԵՐԻ
ՀԻՆ ԵՎ ՆՈՐ ԹՎԱՀԱՄԱՐՆԵՐԻ

Գևորգյան ճեմարան	«Գևորգյան» հավաքածու	Մաշտոցյան Մատենադարան	Գևորգյան ճեմարան	«Գևորգյան» հավաքածու	Մաշտոցյան Մատենադարան
1	—	—	29	—	4325
2	1201	3270	30	1194	3615
3	1189	3571	31	1221	2470
4	1220	2469	32	1203	3408
5	1219	2468	33	1212	3573
6	1177	3568	34	1178	3569
7	1214	2463	35	1200	3621
8	1215	2464	36	1211	2462
9	1216	2465	37	1183	3358
10	1210	2461	38	1206	3411
11	1173	4443	39	1209	2460
12	1192	3406	40	1213	3622
13	1217	2466	41	1185	3360
14	1218	2467	42	1207	2458
15	1181	3570	43	1190	3572
16	1187	3362	44	1205	3410
17	1184	3359	45	1196	3617
18	1188	3363	46	1198	3619
19	1182	3357	47	1222	2471
20	1179	4400	48	1172	2941
21	1224	2473	49	1193	3407
22	1208	2459	50	1197	3618
23	—	4183	51	1195	3616
24	1202	2842	52	1180	4401
25	1186	3361	53	1174	4095
26	1175	3055	54	1199	3620
27	1204	3409	55	—	—
28	1191	4402	56	1176	4399

Ստորև նշում ենք այն անձանց անունները, որոնց ձեռագրերը այս կամ այն ճանապարհով մուտք են գործել Գևորգյան ճեմարանի հավաքածուի մեջ:

Աղեքսանդր քհ. Տեր-Հովհաննիսյան, Թիֆլիս, 1899 թ.—1 (№ 2470):

Առաքել քհ. Պապուկյան, 1859 թ.—1 (№ 2458):

Ավետիք Մամիկոնյան, 1866 թ.—1 (№ 3411): 1863 թ. եղել է Կարապետ Պարոնյանցի մոտ:

Բալասան Թելիմյան Երևանցի, 1899 թ.—1 (№ 3358):

Գ[պուստ] Տ[եր]-Մ[կրտչյան], 1878 թ.—1 (№ 2465):

Գասպար Մովսիսյան, 1880 թ.—(№ 2459):

---

[4] Մատենադարան, Արխիվ, Մատենադարանի ֆոնդ, թղթ. 74, վավ. 49:

[5] «Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի», հատոր Ա, Երևան, 1965, էջ 64:

Դավիթ քհ., որդի Սարգիս Շամախեցու, 1857 թ.—1 (№ 2941):

Եղիազար եպս. Տեր-Կարապետյան Առընջեցի, Էջմիածին, 1889 թ.—1 (№ 3362):

Թադեոս Մելիք-Ավետիսյան Տեր-Մանվելյան—1 (№ 4402):

Իսահակ Այեքսանդրյան, Կողբ, 1865 թ.—1 (№ 3615):

Իսահակ վարդապետ—1 (№ 3408):

Խաչատուր Տեր-Հակոբյան, Ախալցխա—1 (№ 4443):

Կարապետ Պարոնյանց, 1868 թ.—1 (№ 3411):

Հայկ Տեր-Աստվածատրյան, 1897 թ.—2 (№№ 3359, 3410):

Հարութիւն Խալիպյան, Նոր-Նախիջևան—1 (№ 3617):

Հարություն Տեր-Դավթյան—1 (№ 2464): Ցուցակում թյուրիմացաբար նշված է Պողոս քհ. Բեղելյանի անվան տակ:

Հովհաննես տիրացու Գալստյան, 1857 թ.—1 (№ 2941): Ստացել է Դավիթ քահանայից:

Հովհան քհ., Սեյտեվեր գյուղ, 1856 թ.—1 (№ 3572):

Մատթեոս Ավետիքով, 1874 թ.—1 (№ 2941): Պատկանել է նախ Դավիթ քհ.-ին, ապա՝ Հովհ. տիրացու Գալստյանին:

Մեսրոպ արքեպս. Ամբատյան, 1888, 1898, 1899 թթ.—4 (№№ 2470, 3360, 3361, 4400): № 2470-ը պատկանել է Աղեք. քհ. Տեր-Հովհաննիսյանին:

Մեսրոպ վրդ. (Ամբատյա՞ն)—1 (№ 3409):

Մկրտիչ տիրացու—1 (№ 2460):

Մկրտիչ քհ. Տեր-Հակոբյան, Նոր-Նախիջևան, 1899 թ.—1 (№ 3617): Նախկինում պատկանել է Հարություն Խալիպյանին:

Մուրադյան ոմն—1 (№ 2842):

Պետրոս տիրացու Տեր-Բարսեղյան, 1828 թ.—1 (№ 3363):

Պողոս քհ. Բեղելյան, 1899 թ.—3 (№№ 2462, 2463, 2473):

Սահակ Տեր-Մովսիսյան, 1854 թ.—1 (№ 3622):

Սարգիս, 1876 թ.—1 (№ 2461):

Սեդրակ Տեր-Եսայանց—4 (№№ 3357, 3619, 3620, 3621): № 3619 ձեռագիրը 1883 թ. եղել է Կուսապատ գյուղում:

Ամբատ Սիսակյանց Աշտարակեցի, 1899 թ.—1 (№ 3569):

Ստեփաննոս Հարությունյան, 1814 թ.—1 (№ 3573):

Քերոբե Պատկանյան—1 (№ 3618):